11282

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«11»10 2024թ

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

## ԲՓ № 213-24

**Նախաձեռնող՝** **«ՎԱՅՔ ՃՇՇ» ՓԲԸ**
Վայոց ձորի մարզ, Զառիթափ գյուղ 23-րդ փողոց, 2 շենք

**Գործունեությունը՝** Ջերմուկի ԱԿԽ-ի երևակման 3-րդ տեղամասի սահմաններում նախատեսվող օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրություն
*Վայոց ձորի մարզ*

**Առդիր՝ 4 թերթ**

**ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**
**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ**

**ԲՓ №** 213 - 24

«11» հոկտեմբերի **2024թ.**

***Վայոց ձորի մարզի Ջերմուկի ԱԿԽ-ի երևակման 3-րդ փեղամասի սահմաններում նախատեսվող օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն***

| | |
|---|---|
| Նախաձեռնող՝ | «ՎԱՅՔ ՃՇՇ» ՓԲԸ |
| Փաստաթղթի տեսակը՝ | Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն «Բ» կատեգորիա |
| Տեղադրման վայրը՝ | Վայոց ձորի մարզ, Ջերմուկ համայնք, Գնդեվազ բնակավայր |

***Ներածական մաս.*** «ՎԱՅՔԻ ՃՇՇ» ՓԲԸ-ի կողմից նախատեսվում է ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից ստանալ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրությունների թույլտվություն Վայոց ձորի մարզի Ջերմուկի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի 3-րդ տեղամասում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ իրականացնելու նպատակով:

Նախատեսվող գործունեությունը, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (ՀՕ-150-Ն) օրենքի՝ 12-րդ հոդվածի 4-րդ մասի 2)-րդ կետի «ա» ենթակետի, դասակարգվում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում:

***Նկարագրական մաս.*** Վայոց ձորի մարզի Ջերմուկի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի 3-րդ տեղամասը գտնվում է Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի Գնդեվազ բնակավայրի վարչական շրջանում, բնակավայրից 5,8 կմ հարավ-արևմուտք: Բնակավայրի հետ կապն իրականացվում է գրունտային և ասֆալտապատ ճանապարհներով: Ջերմուկ քաղաքից տեղամասը գտնվում է 14 կմ հարավ-արևմուտք, Հ42 մայրուղուց հեռավորությունը կազմում է 0.3 կմ: Շրջանի հիմնական ջրատարը Արփա գետն է, որի ձախակողմյան վտակներից են Դարբը, Սարավանը, Ամուլգետը, որոնք շրջանում ձևավորել են խորը ձորեր և կիրճեր: Տեղամասը հարուստ է քաղցրահամ և հանքային աղբյուրներով: Հայցվող տեղամասը անմիջական կապ ունի Արփա գետի հետ, քանի որ գտնվում է նրա այլուվիալ նստվածքների շրջանում: Հայցվող տեղամասի սահմանը Գետից գտնվում է 7 մ հեռավորության վրա: Որոտան-Արփա հիդրոտեխնիկական կառույցը գտնվում է հայցվող տեղամասից 11.5 կմ հեռավորության վրա: Հեր Հերի ջրամբարը գտնվում է հայցվող տեղամասից 19 կմ արևմուտք, ամուլսարի ոսկու հանքավայրից հայցվող տեղամասի հեռավորությունը 3.9 կմ է: Ջերմուկի ԱԿԽ հանքավայրի 1-ին և 2-րդ տեղամասերից գտնվում է համապատասխանաբար 180 և 70 մ հեռավորությունների վրա: Հայցվող տեղամասը զբաղեցնում է 2.37 հա մակերես:

Տարածքի ծայրակետերի կոորդինատները՝ ARMWGS-84 միասնական համակարգով հետևյալն են՝

1. X=8549058.6107 Y=4397663.3558
2. X=8549209.3557 Y=4397665.0166
3. X=8549244.6261 Y=4397758.6418
4. X=8549383.5670 Y=4397827.9053
5. X=8549365.1565 Y=4397856.3357
6. X=8549255.6776 Y=4397844.6743
7. X=8549215.3789 Y=4397827.6870

Համաձայն հաշվետվությամբ ներկայացված տեղեկատվության՝ հայցվող տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ չեն դիտարկվել, բացակայում են հազվագյուտ էկոհամակարգերը: Հայցվող տարածքի մոտակայքում չկան բնության հատուկ պահպանվող տարածքներ, պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ, տարածքն անմիջական սահմաններ չունի ԲՀՊՏ-ների հետ:

Օգտակար հանածոյի մարմինը նախատեսվում է ուսումնասիրել հորատանցքերով: Հորատման աշխատանքները նախատեսված է իրականացնել սյունակային հորատումով ուղղահայաց տեղադիրքով: Հորատումը նախատեսված է կատարել 112 մմ տրամագծով կարծր համաձուլվածքի թագիկով: Անհրաժեշտ է ապահովել հանուկի առնվազն 90 % ելք: Նախատեսվում է հորատել 7 ուղղահայաց հորատանցք՝ յուրաքանչյուրը մինչև 5 գծ.մ խորությամբ: Հորատանցքերի ընդհանուր ծավալը կլինի 35 գծ.մ: Հորատվող ապարներն ըստ հորատելիության աստիճանի համապատասխանում են V և VI կարգերի: Հորատումը կատարվելու է Christensen CS14 Core Drill տիպի ինքնագնաց հորատող հաստոցով: Նախատեսվում է հորատող հաստոցի 7 տեղակայում և տեղահանում: Հորատման աշխատանքներն իրականացվելու են պայմանագրային հիմուքներով: Նախատեսվում է հետախուզվող տեղամասի շուրջ 5 հա մակերեսի վրա կատարել 1:1000 մասշտաբի տեղագրական հանույթ: Բոլոր հորատանցքերն ու ճանապարհները գործիքի օգնությամբ տեղադրվելու են տեղագրական քարտեզի վրա:

***Պատճառաբանական մաս.*** Նախատեսվող գործունեության փորձաքննությունն իրականացվել է ՀՀ օրենսդրության պահանջներով: Հաշվետվության վերաբերյալ ստացվել են կարծիքներներ ներքին գործերի, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, Վայոց ձորի մարզպետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության մասնագիտացված ստորաբաժանումներից, որոնք դիտարկվել են փորձաքննական գործընթացում: Փորձաքննության գործընթացում Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի Գնդեվազ բնակավայրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպվել և անցկացվել է հանրային քննարկում: 2-րդ հանրային քննարկման ընթացքում բարձրացվել են հարցեր, որոնք վերաբերել են հայցվող տարածքի տեղադիրքի, զբաղեցրած տարածքի և Արփա գետից հայցվող տարածքի գտնվելու հեռավորության վերաբերյալ անճշտություններին: Նշված դիտողությունները փորձաքննության գործընթացում ներկայացվել են նաև ընկերությանը՝ լրամշակումներում հաշվի առնելու նպատակով, սակայն լրամշակված տարբերակը ընկերության կողմից լիազոր մարմնին է ներկայացվել թերի լրամշակված: Փորձաքննության գործընթացում վեր են հանվել հետևյալ հիմնավորումները, որոնք հիմք են հանդիսացել եզրակացության կազմման համար.

***Փորձաքննական հիմնավորումներ***

1. ներկայացված փաթեթում առկա է հակասող տեղեկատվություն հայցվող տարածքի կոորդինատների, մակերեսի վերաբերյալ (հայտում և ծրագրում նշված է նախատեսվում

է հետախուզվող տեղամասի շուրջ 5 հա մակերեսի վրա կատարել տեղագրական հանույթ, հայցվող տեղամասը զբաղեցնում է 2.37 հա մակերես, սակայն համայնքի ղեկավարի նախնական համաձայնության գրությամբ և առաջին հանրային քննարկման ընթացքում հայցվող տարածքը ներկայացվել է 2.22 հա մակերեսով, ինչը չի լրամշակվել նախաձեռնողի կողմից:

2. «4.6 Հողեր» ենթաբաժնում բացակայել է հայցվող տարածքի հողային ռեսուրսների աղտոտվածության վերաբերյալ տեղեկատվությունը:
3. ՇՄԱԳ-ում հիմնավորված չի եղել ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացման համար նախատեսված գումարի չափը:
4. Գործունեության տարածքը համադրվում է կարմիրգրքյան տեսակների աճելավայրերի հետ և ըստ ներկայացված կոորդինատների՝ տարածքը Արփա գետի հունից գտնվում է 7 մետր հեռավորության վրա: Նշված տեղեկատվությունը ճշտելու համար ընկերությանն առաջարկվել է ՇՄԱԳ-ը ներկայացնել նաև Գիտությունների ազգային ակադեմիա՝ գիտական-մասնագիտական դիրքորոշում ստանալու նպատակով, ինչը չի արվել Ընկերության կողմից:
5. «6.3. Ջրային ռեսուրսներ» բաժնում նշված տեղեկատվության համաձայն՝ «Հայցվող տեղամասն անմիջական կապ ունի Արփա գետի հետ, քանի որ գտնվում է նրա ալյուվիալ նստվածքների շրջանում և հայցվող տեղամասի սահմանը գետից գտնվում է 7 մ հեռավորության վրա», սակայն ՇՄԱԳ-ում նշվում է, որ հորատանցքերը գտնվում են 16-33մ հեռավորության վրա և հայցվող տեղամասում իրականացվելիք երկրաբանական աշխատանքները չեն կարող ազդել ջրային ռեսուրսների վրա: Ջրային օրենսգրքի 1-ին հոդվածով սահմանված են ջրաէկոհամակարգերի պահպանման գոտիներ, մասնավորապես՝ ջրապահպան գոտի, որը ջրային ռեսուրսների աղտոտումը և հյուծումը կանխելու, ինչպես նաև բարենպաստ ջրային ռեժիմ ապահովելու նպատակով սահմանված տարածք է, որը ենթակա չէ մասնավորեցման և առգրավման, իսկ համաձայն ՀՀ կառավարության 20.01.2005թ. «Ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչների մասին» N 64-Ն որոշման՝ ջրապահպան գոտիների տարածքները սահմանվում են մինչև 32 մետր երկարությամբ շերտի տեսքով, քանի որ հայցվող տարածքը գտնվում է Արփա գետի ողողահունում և ընդգրկում է գետի ջրածածկվող տարածքներ, ջրապահպան գոտիներ, ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման տարածքներ, որոնք իրենց բնական վիճակով ենթակա են պահպանման՝ որպես էկոլոգիական համակարգեր, հետևաբար հայցվող տարածքի հողերի ընդերքօգտագործումը կարող է բացասական ազդեցություն ունենալ և բնապահպանական ռիսկեր առաջացնել ջրային համակարգերի, հոսքի ձևավորման գոտիների, ինչպես նաև Արփա գետի ջրի որակի և քանակի վրա:

Հիմք ընդունելով ՀՀ ջրային օրենսգրքի 99-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 20.01.2005թ. «Ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչների մասին» N 64-Ն որոշման պահանջները և հաշվի առնելով, որ Վայոց ձորի մարզի Ջերմուկի ԱԿԽ-ի երևակման 3-րդ տեղամասի սահմաններում նախատեսվող օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացումը ջրային ռեսուրսի, գետային էկոհամակարգի և բնական կառուցվածքների հավասարակշռության խախտում, ուստի գործունեության իրականացումը նպատակահարմար չէ:

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ENVIRONMENTAL EVALUATION CENTER OF THE MINISTRY OF NATURE PROTECTION OF RA
ՀՀ ԵՐԵՎԱՆ
ՓՈՐՁԱՓՐՈՍԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
EXPERT CONCLUSION
COMMISSION OF EXPERTS

## ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերը նշված փորձաքննական հիմնավորումները «ՎԱՅՔ ՃՇՇ» ՓԲԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված Վայոց ձորի մարզի Ջերմուկի ԱԿԽ-ի երևակման 3-րդ տեղամասի սահմաններում նախատեսվող օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է բացասական եզրակացություն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Վարդան Հարությունյան